

և պտղոց տօն և ուրախութիւն կատարել. և ի Հայս այլ տեղ տեղ տարւոյն վերջի օրը Մարգարէի կոչեն, որ ըստ այժմու գործածուած տոմարի՝ անյարմար է, և ոչ միայն յարմար Հայոց Նաւասարդին, այլ և հաստատող այն աւանդութեան:

Այս տարեգրից և առաջին ամսոյ անունն, ինչպէս շատ անգամ բացատրուած է, ոմանք կարծէին թէ Քաղղէից տօմարը նորոգող Նաւասարդի մ'անուամբ ըլլայ. (Թողունք Նաւասարդին տրուած մեկնութիւնը). բայց լեզուա-

ղէտք ստուգեն կամ ըստ զանդիկ Պարսից Նաւա-Սէրհաւա, որ ճիշդ Ամանոր, նորամ ըսել է, և կամ մանաւանդ ըստ Հընդկայ Նաւա-Սարսուս, Նոր ջրոց տօն: Գիտեն՝ ամենքն ինչ որ վարդապետի տօնին արտաքին հանդէպ կատարուին ջրոց նսրկմամբ՝ առ մեզ, նոյնպէս և ի Պարսս իրենց նոր տարւոյն. յայտ է եւս զի վարդապետն՝ այժմ տօն Աւակերպութեան Քրիստոսի, Նաւասարդ ամսոյ առջի օրերուն հանդիպի: (Շարայարեյի).

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲԱԽՍՍՈՒԹԻՒՆ (HAGIOGRAPHIE) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ

ԵՒ ԱՌԱՆՋԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Ա

Քրիստոսական կրօնից և երկնահրաւէր վարդապետութեան զէմ յարուցուած հալածանաց բռնութիւն՝ Հռովմայ կայսերաց հրամանաւ, իրենց տէրութեան ընդարձակածաւալ սահմանաց, և կայսերանիստ ոտանին մէջ ըլլալով, բնական հետեանքով այն մեծ քաղաքը, քրիստոնեայ աշխարհին համար կեդրոն մը պիտի ըլլար, ուր նախ պիտի հաւաքուէին, և ապա փնադուէին և օտուժնասիրուէին՝ սրբոց մարտիրոսաց, յարեւել և արեւմուտ, ուր կ'իշխէին և կը հրամայէին Հռովմայեցիք, վարուց և վկայական հանդիսից նախնական հետք և ստուգապատմ վաւերականք: Լուրջ և ծանրակշիռ վրկայութիւնք նախնի քահանայապետական տաւրեղութեանց կ'աւանդեն, թէ սուրբն Եղեմոս՝ կամ անմիջական և կամ երկրորդ յաջորդ առաքելապետին, պատուիրեր ու սահմաներ էր Հռովմ քաղաքին չորեքտասան բաժանմանց կամ թաղից մէջ՝ եօթն նոսարք,

որոնց զործն և պաշտօնն պիտի ըլլար՝ խընամբով և հաւատարիմ զգուշութեամբ հաւաքել՝ իւրաքանչիւր թաղի հասարակութեան մարտիրոսաց վկայութիւնն կամ գործերը (ձեռնագրեր): Ականատես վկայից բերնով աւանդուած, նոսարաց ձեռքով, և տիրոնեան սղագրութեան զիւրին ճշգրտութեամբ զրի առնուած, ամեն եկեղեցեաց և գետնազամբանաց մէջ ժողովուած հաւատացեալներէ վերաքննութեամբ արձանագրուած այս գործերը, արիւականք և երկնահրաւէր, կը մատուցուէին առ արքայան քահանայապետս. « որոց եւանդիկն հաւատոց արգասիք են, կ'ըսէ Քահանայապետական մատենակն (Liber Pontificalis) այս նուիրական գրոց բազմութիւնք »:

Որչափ ալ ուզէ մէկը տարակուսական ենթադրել զստուգութիւն այս վկայութեան, կամ սարբեր իմաստ տալ անոր, առկայն նոյն ժամանակէն քիչ մ'ալ վեր ելնելով, դիւրին է գտնել նաև մինչ ի պրակս

առաքելականս՝ որ զրուած են ի Հոսիմ, ի թուղթս սրբոյն Պաւղոսի, և մինչև յաւանդութիւնս հնոյ հրէական ժողովարանին, գլխաւորապէս վարուց չարաքակտացի հաճոյացելոց Աստուծոյ և սրբոց՝ պատուեալ և անգամարանաց հիմնական և յատկանիշ մտա՝ ծովութիւնս՝ կ'ազդէր զգաղափար հաւաքելու և ի մի ամփոփելու զգասակարզ և զվկայաբանութիւն և զգործս մարտիրոսաց :

Հեթանոսք՝ նոյն իսկ իրենց մահուանէն ետք՝ կը սիրէին Ճաշ յառանձնութեանս. և մէջերէն հռչակաւորագոյնքն, մեծ անուան և քաջարութեանց ժառանգք եւ զործողք, կը հանգչէին միայնակ փառաւոր և հոյակապ շիրմաց մէջ : Եթէ ուրեք տեսնուին կամ զբոսնուին՝ յատուկ ընտանեաց անուամբ յորհորջուած հանգստարանք այլ, մասնաւոր տոհմի մը կը պատկանէին անոնք, և ոչ ամբողջ գերդաստանին. որով կային՝ — այսպէս Ըսենք ընկերական կոչուած աղաւնէտունը (Colombajo), բայց ոչ հասարակաց կամ բազմամարդոյ (poliandria) հանգստարանք, բաց ի գերեաց և աղքատաց համար սեռականանուած փութիկն (puticuli), ուր խառն ի խառն կ'ամփոփուէին անոնց մարմինք :

Քրիստոնէական հանգստարանք արտափայլութիւնք պէտք է համարուին այն հրաշալի սիրոյն՝ որ մահուանէ ետքն ալ խանդավառական գորովանօք՝ ի միաբանութեան կը պահպանէր ի Քրիստոս Յիսուս եղբարց նախկին գերգաստանները : Ի Հոսիմ՝ փոքրոցս (foresores) կոչուած եղբայրակցութիւն մը հաստատեցին, որոնք իրերիկոսական պատիւ ալ սնէին. և ամեն թաղ ունէր նաև գնուիրապետութիւն այլ աշխատողաց, որ գիշեր ցերեկ զործի վրայ էին փորուհ հողի մը վրայ. կարծես թէ աշխարհամոլութեան առաջին օրերէն՝ նախախնամութենէ պատրաստուած ընդարձակ ու փռացողական կազմուած աւագակուսին մէջ ծածկելու զսերմն բարի, մարտիրոսաց արեամբ ոռոգելով : Հայուած են որ ի Հոսիմ քառն էին թուով այդպիսի եղբայրութիւնք, որ միանգամայն անընդհատ աշխատելով՝ առաջին երկու դարուն մէջ բացին հազար երկու հարիւր հազարամեար զետեան :

Փոքր սրահներ և վեց միլիոն քրիստոնէից շիրմ հանգստեան :

Այս հանգստարանաց շատերը կամարաձեւք էին որոց տակը կ'ամփոփուէր մարտիրոսի մը մարմինը, և իր վկայական պատմութեան համառոտութիւնն ալ նշանակուած էր այն ստուգապէս յաղթական ստորերկրեայ անցից միջին որմերուն վրայ. — սոսկ անուն մը, որ մը, Խիտղոս մը, յաճախ նշանագրուած արմաւենոյ ոստով, կամ աղաւնեակ և մեծագորութիւն մը : Ասոնք ամենքը մէկ տեղ ունէրլով, կ'ունենանք նախնական եկեղեցւոյ մէջ սովորական վկայական պատմութեանց օրինակ մը :

* *

Զրիապէս զուրցուածք մը չէ այս վկայականութեանց գիւտը. այլ ամենօրեայ կոչում մը յեկեղեցւոյ մեծաբաւած Սրբոց : Բառն իսկ՝ զոր անդամին յառաջին դարուց քրիստոնէութեան սովոր են հաւատացեալք զործածել, հանգիստ կոչելով՝ ուր ժամանակաւոր կերպով պիտի պահպանուի անմահական հողայն ընկերակիցը՝ նորոգուելով որ մը հազորդ ըլլալու անոր անճառահարչ փառացը, անհամեմատ կերպով կը պատշաճի Սրբոց հանգըստարանին : Առաջին մեզի ծանօթ կազմակերպութիւն, որ Հոսիմայ եկեղեցւոյն է, ուրիշ բան չէ՝ բայց եթէ շարունակեալ կարգաւորութիւն մը այդ հանգստարանաց կամ դրից (depositio), և կարծես թէ զաղափարուած Հոսիմայ գերեզմանատանց ստորերկրեայ սրահից որմոցը արձանագրութիւններէն :

Հոն՝ նուիրական զամբանաց, մահուան յիշատակաց՝ այլ անմահութեան յայտ, սէր և եւանդն արծարծող սրբաւայրին մէջ հաւաքուող քրիստոնէից՝ կ'ընթերցուին այդ արձանագրութիւնք, երեք վախճանաւ կամ նպատակաւ. յիշեցնելու և նորագելու ի միաս ժողովրդեան իրենց եպիսկոպոսաց յաջորդութեան կարգը, զկենդանիս՝ իրենց եղբարցը աղօթից յանձնելու, և ի յիշատակել զհանգստեալս :

Այս վերին յիշատակութիւնք՝ քրիստոնէութեան կրած հալածանաց առաջին օրերէն, բացին վկայական մահուամբ յաշխարհէ փո-

խաղրուողք. բայց ամենուն անուանքն ան-
խաիր չարձանագրութեան՝ առանց նախընթաց
քննութեան, կամ միայն այն անունը կրել-
նուն համար, այլ անոնք եւեթ՝ որ հանդի-
սական յիշատակութեան կամ մեծարանաց
պաշտամանն արժանաւորք համարուելով՝ մաս-
նաւոր անուամբ քննեալ և վկայեալ (vindi-
cati) մարտիրոսք կը կոչուէին: Եւ այս կեր-
պով փառաւորեալ խոստովանողաց գործք (ac-
ta) յատուկ խնամքով հաւաքուած, քննու-
թեան խիստ բովե անցած, հասարակաց ըն-
թերցանութեան ընծայուելով, նուիրական ա-
ռաջին պատմական հաւաքածոյից և սրբագիր
կենսագրութեանց հիմունքն եղան:

* *

Մարտիրոսաց և վկայից անուանք, կա-
ղանդացոյցք, տուամբք և արձանագրութիւնք՝
ճոխագոյն և առատագոյն պէտք էին գտնուիլ
ի Հռովմ քան այլուր. այն քաղաքական և
բարոյական պատճառաց համար որ յայտնի
են արդէն. և Պրուտենտիոս քերթող կ'եր-
գէր, « անթիւ ոսկերս և ածինս Սրբոց տե-
սեալ ի Հռոմուկեայ ի քաղաք »:

Կը վկայէ եկեղեցւոյ պատմութիւն թէ ի
Սրբոյն Եղեմայ սկզբնաւորեալն՝ հաւատարմու-
թեամբ շարունակեցաւ Անտրոս քահանայա-
պետին ձեռքով (գրեթէ 236 թ.). լատն գի-
րեւն համար աւանդուած է զոյով՝ թէ « փու-
թալան հետազոտութեամբ ետեւ եղաւ հա-
ւաքել նոստրաց ձեռքով աւանդուած Սրբոց
վարքերը, և յանձնեց որ քաղաքին չորեք-
տասան դիւանաց մէջ զգուշութեամբ պահուին ».
որովհետեւ նախկին եօթն թագք բնակութեան
քրիստոնէից՝ ընդարձակուած էին իւր ժամա-
նակին և նոյնչափ թուով աճած, որպէս
կային և չորեքտասան եկեղեցիք, և կայսերա-
կան Հռովմայ այդ չորեքտասան թաղից տակ՝
նոյնչափ ստորերկրեայ քաղաքք բնակութեան,
որ քիչ ժամանակէն քրիստոնեայ Հռովմը
պիտի կազմէին: Եւ այս նոր քաղաքին ընդ-
արձակութեան՝ ոչ ինչ այնքան սատար և
միջոց պիտի ըլլար՝ որչափ մարտիրոսաց վը-
կայութեան ծանօթութիւնն: Յոյն և հռով-
մէական հայրենասիրութիւնն՝ կը ճանչնար այս
քաղաքիւք. գիտէր զրուստել և մեծացընել

իւր քաղերն, և ինչուան երբեմն աստուա-
ծացընել. ուստի և քրիստոնէութեան զէմ
հակաաւանդարտ հալածանքք պատերազմած
ատեն, զայն սկարացընելու, անոր զօրութիւնն
և ոյժ ոչնչացընելու միակ միջոց սեպեց՝ ա-
նոնց քաջամարտիկ և աստուածախրախոյս նա-
հատակաց սրտայոյզ և սրտազրու պատմու-
թիւններն և վկայաբանութիւններ բնաշինջ
անհետցընել: Ինչպէս սուրբն Եղեմէս, այս
պէս նաև սուրբն Անտրոս, զոհ եղաւ այս
սրբազան տարեգրոց պահպանութեանն համար
ցուցած եռանդեան, զի կը վկայեն Քառա-
նայապետական տարեգիրք, թէ Մաքսիմուս
քաղաքապետին հրամանաւ՝ վկայական մա-
հուամբ փոխեցաւ և նա յաշտարէ:

Յաջորդեց անմիջապէս սուրբն Փարիանոս,
որ նորագոյն եռանդեամբ ու հաւասար սրտիւ
և ջանքով շարունակեց նախորդին գործը.
նոստրաց օգնական տալով կիսասարկաւա-
զուները՝ որ կը հաւաքէին ամբողջապէս Սրբոց
գործերը և կը յանձնէին սարկաւազաց: Այս-
պէս կը կազմուէր ի նախնական եկեղեցւոյ
առաջին ատեանն սրբացուցմանց, երեք աս-
տիճաններէ անցնելով. առաջին՝ նոստրք,
որ մարտիրոսական որ և իցէ հանդիսի մը
առաջին տեսարանը՝ կ'աւանդէին՝ որուն ար-
ժանի եղած էին ականատեսն վկայութեան.
երկրորդ կիսասարկաւազուներ՝ որ առաջնոց նը-
շանագրութեամբ և համառօտիւ արձանադրած-
ներն՝ ամբողջութեամբ պիտի մըայ առնչով կը
լրացնէին. և երրորդ սարկաւազուներ՝ որ կը
նախապահէին, և միշտ վերաբերութիւն և
կախումն ունէին վերին և գերագոյն դատա-
ւորէ մը, որ էր ինքն քահանայապետն:

* *

Այսպէս Հռովմայ եկեղեցին եղաւ վկայ
և աւանդապահ այս փառաւոր խոստովանու-
թեանց: Անդադին յառաքելական ժամանակաց՝
իրեն յանձնեց սուրբ Ղուկաս զՊրակս նոցա:
Հեղեմիպոսո՝ մեզի ծանօթ առաջին եկեղե-
ցական պատմագիրն, յերուսաղեմէ եկաւ ի
Հռովմ, 177 թուականին միջոցներն, քննե-
լու և ծանօթանալու քրիստոնէական դիւա-
նաց. և Եսեբեայ խօսքերն, զոր կը գնեմք
ի ծանօթութեան, աւելի պատմական քան

վարդապետական քննութիւն կ'ենթարկեն¹ . մանաւանդ թէ ոմանք կ'ընեն որ այդ ուղեւորութեան զխաւոր նպատակն էր իր յիշատակարանաց մէջ յետուլ զարձանագրութիւնու եպիսկոպոսաց այլ և այլ եկեղեցեաց :

Սրբուհայն Սիմփորոզայ վկայաբանութեան ի զուի գրուած ծանօթութիւն մը, հետաքըն, նական և յայտնի վկայութիւն կու տայ մեզ, զոր եթէ ընդունելի և հաւատարմութեան արժանաւոր սեպենք, Հեղեւսիպոսի նպատակաւ ի Հոռոմ եկած է և Յուլիոս Ափրիկա, նոս, և հաւաքում մը բրած գործոց և վրկայութեանց մարտիրոսացն Հռովմայ և Խոտ, լիոյ մասնաւորապէս, և թէ այս պատուական աշխատասիրութիւն՝ ամբողջովին մուտ գտած ըլլայ Եւսեբեայ նոյն նպատակն ունեցող գրուածոյ մը մէջ. « Սուրբ պատմագիրն Եւսեբիոս, կ'ըսէ, յիշատակէ թէ Ափրիկանոսի ի զոր հարեալ իցէ զամենեւորն որ ի թաղարական քաղաքին և ընդ ամենայն Խոտ, լիա վասն ֆրիստոսի հաւատոցն վկայեցին, զպատմութիւնս անցիցն. որ և վասն Սիմփորոզայ ասէ եւթն օրպովքն ի միում աւուր նահատակեալ ի Տիրուր, առ իշխանութեամբն Արքիանոսի » : Հատուած մը միայն այս գեղեցիկ վկայաբանութեան հասած է մինչև առ մեզ, զոր յառաջ կը բերէ Հաւսիանդ իւր հաւաքած ամենահարազատ վկայաբանութեանց զրբին մէջ, և Տիլմոնտ կը գրուատէ իւրու մեծապէս արգոյ ճոյ պարզութեամբն և ստուգութեամբ :

Հռովմայ եկեղեցւոյն օրինակին հետեւեցան՝ արևմտականքն և ասիական եկեղեցիք, որ փոփոխակի սովոր էին հաղորդել միմեանց՝ Ասիոյ եկեղեցեաց հետ, իրենց քով կատարուած մարտիրոսաց նահատակութեանց հանդէսներն. նոյնպէս կը յղէին զանոնք ա-

ւանդող շրջագայական թուղթերն (circulaires), և կ'ընդունէին զնման երկասիրութիւնս :

Գիտութիւն է միտել Պիոսի առաջնոյ քահանայապետի թղթոյն վաւերականութիւնը, զոր 166ին ուղղեց առ Յուստոս եպիսկոպոս վիէնայ (Փաղղիոյ), որով կը յայտնէ սուրբ հայրապետն իր սրտին զոհութիւնն և ուրախութիւն Աստալոս պատգամաւոր նուիրակն ընդունելուն համար, որ կը բերէր առ նա նամակներ և նորանոր գործս վկայական հանգիսից քրիստոսամարտիկ նահատակաց. ուստի և կը յանձնէր խնամով հաւաքել այդպիսի պատմութիւններ ի գիւտնս եկեղեցւոյ սրբոյ, քննութեամբ վաւերացնելով, և մեծարանօք և յարգութեամբ պահպանել սրբոց վկայից նշխարքը :

Ամենայն ինչ նպատաւոր է Աստուածազգեաց հայրապետին նահատակութեան վաւերականութեան. և երկմտութեան տեղի չմնաց արևմտեան քննադատ բանասիրութեան առջև, նախ երբ իրենց ծանօթ լեզուով կարդացին՝ հայկական մատենագրութեան մէջ խնամքով պահուած այդ հրաշալի նահատակութեան սրտազրաւ պատմութիւնը, և ապա զրացի արեւելեան մատենագրութիւններէն ալ նորանոր վերայայտնութիւնը ընծայուեցան յասորի և յայլ վաղեմի եկեղեցեաց : Նոյնպէս նորագիտ և մեծայարգ բնագիրք արեւելեայք՝ աւելի հաստատութիւն և վաւերականութիւն սուին այն շրջաբերական թղթոյն՝ զոր ակահատեալ նուիրական նահատակութեանն գրեք և հաղորդէր էին Չմիւռնիոյ և այլոց եկեղեցեաց արեւելից, ծանուցանելով և հաղորդելով այն մեծ դէպքը, որպէս զի ամէնքը գիտանա զօրն և զգոմանակ, և տարեկան յիշատակը կատարեն ամ ըստ ամէ, ընթեռնելով ի լուր հաւատացեոց իրեն նահատակութեան պատմութիւնը :

* *

1. « Իսկ Հեղեւսիպոս ի հինգ խօսան զոր ուսմք մեզ՝ զոր եղեալ է նորա, եթող նա զյիշատակաւ խորհրդոց իւրոց ի կատարեալ : Աի ի նոսա ցուցանէ թէ ընդ եպիսկոպոս բազումս հաղորդեցաւ ի ժամանակի իւրում.։ Իբրև խաղացեալ երթայր նա ի ճանապարհն ի Հռոմ քաղաք. և յամենեցունց զայս ուսումն ընկալաւ նա » : — Պատ. Եկեղեցւոյ, Դ. 32 :

Այսպէս և Սուրբն Կիլիւրիանոս՝ մինչ մէկ կողմանէ կը քաջալերէր և կը խրախուսէր զվկայս Հռովմայ, և կը զրկէր անոնց՝ զանաւան և զգործ իրենց եղբայրակից վկայեաց յԱփրիկէ, իր տարապաւութեան ընկե-

րաց հաւատացելոց ալ կը հաղորդէր զվկայական գործն սրբոց փաբիանոս և ֆսեստոս հայրապետաց, և հաւանականաբար նաև զայլոց մարտիրոսաց Հոռովմայ, որ քիչ ժամանակէն պիտի արձանագրուէին կարթագինէի եկեղեցւոյն սրբոցը դասակարգութեան ցուցակին մէջ:

Կարթագինէի եկեղեցին, յետ Հոռովմայ, մեզի ծանօթ առաջին կաղանդացոյցը ընծայած է: Տերտուլիանոս՝ երկրորդ դարէն, մէջ կը բերէր արձանագրուած վկայական հանդէսներն, թիւ և քննութիւնը. և Կիւպրիանոս՝ իբրոյ արդէն ծանօթ և հաստատուն սովորութեամբ ընդկեցած բանի մը վրայ կը խօսի, թէպէտ և Պոնտիոս սարկաւազ՝ իրեն կը թուի ընծայել զպատու մոծման ի կարթագինէ զսովորութիւն կաղանդացուցից:

Մեր ինչուան հիմայ ըսածներէն յայտնի կ'երևնայ, թէ յիշատակուած հին ժամանակներէն ի վեր քրիստոնեայ եկեղեցւոյն մէջ զոլութիւն ունէր արդէն սրբոց վարուց կամ նահատակութեան քննութեան ատեան մը՝ որոյ կեդրոնը կը համարուէր ի Հոռովմ: Ի չորրորդ դարու՝ սրբոյն Վիգիլիոսի եպիսկոպոսին Տրիդենտոյ վկայաբանութիւնն՝ բաւական է ի փարատել զամենայն տարակոյս և երկբայութիւն: Այս գործը կամ վարք եպիսկոպոսին պահուած էին Օպրէիթ անուն հմուտ օգիտական նորադանդի մը քով, որ և նա Մապիլլոնի յանձնեց զայնս. յորմէ՝ ինչպէս նաեւ ի Բոլլանդեանց՝ վաւերականք եւ տուգապատում՝ ճանչցուեցան: Այդ զործոց մէջ՝ նշանակութեան արժանաւոր հետեւեալ խօսքերը կը կարդացուին. թէ, « յղեցան առ հայրապետն Հոռովմայ, առ մեծարդոյ եպիսկոպոսն առաքելական. և նա արժանի համարեցաւ զի պահեսցին, և յաւելեալ զստորագրութիւն իւր, հրամայեաց արձանագրել ի նուիրական մատենի յիշատակարանաց վրէկայից ու:

Ուրիշ վկայութիւն մ'ալ յաւելունք, հանեալ ի գործոց սրբոյն Դիոնեսիոսի Պարիսու: Որչափ ալ անհամաձայն ըլլան կարծիքայք մեծ քաղքին առաջին եպիսկոպոսին վրայ, թէ արդեօք արիսպագացի՞ն է նա, եթէ երրորդ դարու մէջ ապրած համանուն անձ

մը, կամ թէ երկուքն ալ այլեւայլ ժամանակ ամետարանած ըլլան այդ կողմեր, ինչ որ թերեւս աւելի հաւանելի է՝ անհակառակելի վկայութեան մը կը հանդիպինք, ճոխաբար ապացուցուած և համաձայն այն նախնի ժամանակաց պատմութեան հետ, նամակի մը մէջ զոր սուրբն Դիոնեսիոս գրած էր առ Կղեմէս հայրապետ, սրբոյն Եւտրոպիոսի վրէկայական գործերն յղելով առ նա, և առ ընկերակիցս իւր տուած պատմութիւններն, որպէս զի այն վկայութեան պատմութիւնը արձանագրեն, զատուարաց զիմաց հարցաքննութեան ատեն տրուած պատասխաններով, և յղեն ի Հոռովմ և յԱթէնս:

— * —
— * —

Հաւաքական սրբագրութիւն (hagiographie), այսինքն՝ այլեւայլ որոց վարուց ի միասին հաւաքումը՝ ինչպէս յարեւոտոս, առանկ ալ յարեւելոս ժակաւութիւք են համեմատաբար, սակայն մեր ձեռքն ժամանած պատմական մնացորդներէն յայտնապէս կը տեսնուի, թէ յարեւելոս ալ հին ժամանակներէն ի վեր կային շարք մը վաւերական յիշատակարանաց, որ ոչ միայն հեղինակութիւն մը կը կազմէին, այլ և քննադատութեանց առջ կը ծառայէին՝ սրբելու, մաքրելու քաղմամբ անվաւերական նմանօրինակ գրութիւններէ, որոց առատութիւն էր 'ի Յուդաստան: Թ' Եփեսոս՝ անգոստին յառաքելական ժամանակաց՝ քահանայ մը եկեղեցական պատժոց և արհամարհանաց ենթակուեցաւ, հնարած կամ այլափոխած ըլլալուն համար գրուածք մը Պաւղոսի առաքելոյ և թեկզ սրբունոյ վրայ:

Չմիւռնիոյ եկեղեցւոյն թուղթը սրբոյն Պոլիկարպոսի նահատակութեան պատմութիւնն բնելով, ամենեւին տարակոյս չի թուար թէ նոյն եկեղեցւոյն մէջ կար մարտիրոսաց ցուցակ կամ կաղանդացոյց մը ի գործածութեան. Նոյն սրբոյն վկայական գործերէն, ինչպէս նաև սրբոցն Անդրէի, Թէոփորայ, Կիրակոսի, Սաբայ, Ապղոնիայ վրէկայունոյ, կը տեսնուի թէ եկեղեցիք Աքայիոյ, Չմիւռնիոյ, Իկոնիոյ, Անտիոքայ և Ալեքսանդրիոյ ունէին, արեւմտից եկեղե-

ցեաց նման զսովորութիւն, — ինչպէս յիշատակեցինք, — փոփոխակի հաղորդելու միմեանց զըշխազայական թուղթն և տեղեկայելու :

Եւսերիոս մէջ կը բերէ, ինչպէս արդէն սովորական բան մը, թէ սուրբն Գիորնոսիոս Սղեբասդրիոյ՝ յոյեց ի Հռովմ զվկայաբանութիւն սրբոյն Եւստրպիոսի : Հետեւինն առած զցուցակս եկեղեցական տօնից, զարձանադիրս և զպատմութիւն նահատակացն վկայելոց յիտալիա և յարևմուտս, կը օփոէին զանոնք յարեւելս և մինչև ի ծագս երկրի : Եւ այս արագ արագ ծաւալումն վկայաբանութեանց՝ որով և պաշտօնման նուիրելոյ մարտիրոսաց, պատճառ եղաւ որ վրան ժամանակ անցնելէն ետքը, թուականաց և ժամանակաց՝ որպէս նաև անուանց և զիպաց, մի և նոյնութեամբ, ծանր պատմական զբժարութիւններ ծագեցան, զորս չկրցաւ առողջ և լուսամիտ բնադատութիւնն անգամ յաշտութեամբ մեկնել կամ արժանապէս լուծել :

*
* *

Յաւալի է արդարև որ արեւելեան եկեղեցիք՝ այնչափ ճոխացեալք թէ ստուգաբան և թէ անվաներ գրութեամբք սրբագրական պատմութեանց և աւանդից, կարող չեղան հասցընել առ մեզ Եւսեբի լուղի և յամենայն կողմանէ անբասիր վաւերականներ, նման Հեղեոսիպեայ, զոր յիշեցինք, կամ Կեսարացւոյն Եւսեբի մեծ երկասիրութեանց : Թեբեոս այս վերջնոյս գրոց կորստեան մեղադրութիւնը՝ արեւելէն աւելի արևմտից վերաբերի, որովհետև նորապոյն ժամանակաց մէջ կը համարուի եղած ըլլալ :

Վասն զի ըստ Ուսուարդայ՝ որոյ ժամանակ դեռ եւս ծանօթ էր Եւսեբեայ այս գրութեան, Կոստանդիանոս մեծն՝ ըստ խնդրոյ իմաստուն եպիսկոպոսին Կեսարացւոց, հետամուտ եղած է այսպիսի հաւաքմամբ մը ճոխացընելու զարեւելեան եկեղեցի : Ամենահին նամակ մը, որ սրբոյն Հերոնիմոսի կ'ընծայուի, և գրուած է ի զլուս իւր անունն կրող Մարտիրոսոյք քրիստի մը, կը պատմէ թէ Կոստանդիանոս եկած ըլլալով ի Կեսարիա,

առաջարկեր է Եւսեբեայ՝ որ իր եկեղեցւոյն համար շնորհք կամ պարգև մը խնդրէ ի կայսերէ : Եւսեբիոս պատասխան տուեր է թէ իր եկեղեցին արդէն ճոխ է հաւատացելոյ նուիրաբեր ստացուածքներով. և թէ իրեն համար ամենացանկալի և թանկագին շնորհք է և պարգև՝ եթէ արքունական հրամանաւ ճիշտ խուզարկութիւն ըլլուի բովանդակ կայսերութեան սահմանաց մէջ, ուր որ Աստուծոյ ծառայից դէմ վճիռք և հալածանք արձակուած էին, զիւսաններն քննելով՝ հաւաքել մանրամասն ինչ որ մարտիրոսաց պատմութեան և վկայութեան կը պատկանի, իրենց անուամբն, ինչպէս նաև զաստուրաց, զաւառաց, զաղաքաց, նշանակելով զօր վկայութեան, զազգ ազգ տանջանարանացն և աստուածահարչոյ յաղթանակաց պարծանքը. որպէս զի ամեն զիւրութիւն տրուի և մատուցուի իրեն, որով կարող ըլլայ՝ այն տեղուանքը նահատակուող մարտիրոսաց ընդհանուր տիեզերական տարեգիրքն յօրինել : Այս աւանգութեան հիմնական եւ ստոյգ ըլլալուն երախտարութիւն է, սրբոյն Եւստրպիոսի Սղեբասդրիոյ նամակ մը առ մեծն Գրիգոր հայրապետ :

Ասիկայ պատրաստութիւն կամ սկզբնաւորութիւն մը եղաւ՝ իր մեծ երկասիրութեանը, Եկեղեցւոյ ընդհանուր պատմութեան, ուր այլեայլ ակնարկութիւնք կ'ըլլան այս գրութեանց. և մակադրութիւնն էր Հաւաքումն մարտիրոսաց հնոց (ΣΥΝΑΓΩΓΗ ΤΩΝ ΜΑΡΤΥΡΩΝ ΑΡΧΑΙΩΝ) մետառան հրոց բաժնուած, բովանդակելով այլեայլ վերնագրոց տակ՝ ինչ որ հեղինակն (Եւսեբիոս) յաշտութեանը եր ծանօթեալ, լսել և ընթերցելով՝ զարակական և զաստուածահաճող միջոցնաց հայրապետաց, մարտիրոսաց, խոստովանողաց և կուսանաց. մասնատու խնամքով հաւաքել ժողովներ էր զստմարական արձանագրութիւնս երից առաքելական աթոռոց՝ Հռովմայ, Անտիոքայ և Աղեքսանդրիոյ՝ յաւուրց սրբոյ առաքելապետին : Այս գրութեանն որիչ էր ի Պաղեստին նահատակուող սրբոց վկայաբանութիւնը, որ ինչուան առ մեզ հասած է յոյն սկզբնադրաւ ի Պատմութեան եկեղեցւոյ կ'աւանդէ թէ Հաւաքումն մէջ անցուցեր է զամբողջ պատ-

մութիւն վկայիցն Լուսինի, և իրենց առ
Ելեւթեր քահանայապետ գրած թուղթն,
զգործս սրբոյն Ապողոնիոսի և զխառնութեան
կան ճառ նորա առաջի ծերակառնին, զվկայա-
բանութիւնս սրբոյն Պիոնի, Կարպոսի և Բա-
բելայ, Ուսեր և Պապեպրոք՝ նոյն պրքէն
հաստած կը համարին զվկայութիւն սրբոյն
Ղուկիանոսի, ու եգիպտացի կրկին վկայից՝
զոր մէջ կը բերեն Բոլլանդեանք: Եւստօթ է
մեր բանասիրաց թէ հանրածանօթ հայապետն
անպիտացի Կոնիդիո՝ մեր հին վկայաբանու-
թեանց գրոց մէջ գտնելով Ապողոնիոսի վար-
քը, եւսերեան կորուսեալ մատենին մասն
համարեցաւ զայն: Ամենահին է դարձեալ և
թերեւս ի նոյն Եւսերի գրոց առնուած՝ Պիոնի
քահանային հարազատագոյն ընտիր վկայա-
բանութիւն մը, որոյ վրայ մօտ տարիներս
հետաքննական ուսումնասիրութիւն մը հա-
տարակած է՝ վատիկանեան գրչագրաց եր-
կորդ մատենադարանապետն Կոցցալուցի:
Հուլիանարդ ալ իր Հարազատ վկայաբանու-
թիւնը կոչուած զրպին մէջ գտնուածներէն շատը
այն աղբիւրէ յառաջ եկած կը համարի:

* *

Սրբոյն Հերոնիմոսի ծանօթ էր այս հա-
ւարում: Հարանց վարք կոչուած երկասիրու-
թիւն մը, որ իր անուամբը կը ճանչցուի, և
սուրբ վարդապետին պոճէ ժամանակակից կը
թուի, շատ օգտուած կ'երեւայ անկէ:

Բայց վեցերորդ դարէն կը սկսէր սակա-
ւագիւտ ըլլալ այս դրութիւն Եւսերեայ:
Սուրբն Եւլոգիոս Աղեքսանդրիոյ, զոր քանի
մը տող յառաջ յիշեցինք, գրեց առ Մեծն
Գրիգոր Ա, աղաչելով օրինակ մը այն գրու-
քէն իրեն համար հայթհայթել. և թէպէտ
հետազոտութեանց ելքը անօգուտ և ապար-
զիւն, սակայն կարծուեցաւ թէ գէթ հետը
կամ մասունքը ինչ կրնան գտնուիլ յարեւ-
մուտս. այնպէս որ կարտուտեան միանձն մի,
Յովհանն համբուրցեցի, ի թղթին. զոր ի
1408 ուղղեց առ Հենրիկ Օլեման կը յիշէր
գրուած մը՝ Հնգից պատկաց խորագրով, զոր
Եւսերեայ կ'ընծայէր:

Ենթադրուեցաւ դարձեալ՝ թէ յոյն բնա-
գիրն գրուածիս գտնուի ի մէջ գրչագրաց Եւ-
զուրիայի ի Սպանիա. և Վոսիոս և Փլորեն-
պին ստուգութեան կերպարանք ուղեցին ըն-

ծայել. իսկ Բարոնիոս ուրիշի վկայութեան
վրայ ըսեր էր, թէ 1579ին տպագրուած ցու-
ցակի մը մէջ յայտնապէս կը յիշատակուին
երեք յոյն գրչագիրք նոյն հաւաքման՝ դեռ
եւս բոլորովին անծանօթք: Բայց եօթնեւ-
տասներորդ դարուն՝ Հոլտէյն Լ. ականատես
քննութեամբ վկայեց և հաւատարմացոյց թէ
չկայ այնպիսի գիրք մը, ինչպէս կ'ենթա-
դրուի, և գրեց առ մեծ դուքսն Տոկանայի,
թէ յեւզուրիալ գտնուածն ուրիշ բան չէր՝
բայց նոյն մատենագիրն Պաղեստինի վար-
տարուսաց պատմութեան մաս մը, զոր Սպա-
նիացիք լորիպանօք՝ Եւսերեայ կորուսեալ եր-
կասիրութիւնն հռչակէր էին:

Աւելն և յոյս արեւմտեան բանասիրաց այն
յուսախաբութեան վրայ՝ այնուհետեւ արեւե-
լեան հին ազգաց եկեղեցական մատենագրու-
թեանց և սրբախօսական գրուածոց վրայ դար-
ձած է. և արդէն անտի պլելեպլ իրենց հա-
մար կորուսեալ ենթադրուած գիւտերովը քա-
ջալերուած, այս նկատմամբ ալ կը սպասեն
շիրիպիլ, գէթ մասնական կերպով, իրենց
ակնկալութենէն: Աստեմանի կ'ըսէ, թէ ա-
սորի թարգմանութիւնն կը գտնուի տակաւին,
հաւատարմացընելով թէ օրինակ մը բերած
և դրած ըլլայ ի վատիկանեան մատենադա-
րանի: Մեզմէ քառասուն և աւելի տարիներ
յառաջագոյն արեւելքէն փոխադրուած և Բրի-
տանական մուսէոնին մէջ գրուած ասորի
գրչագրաց մէջ, զուրցուեցաւ թէ կը գտնուին
և պիտի հրատարակուին՝ ուրիշ հետաքննելի
երկասիրութեանց հետ՝ նաև Սրբոց հին և
ստուգադիր վկայութիւնք՝ որ եւսերեան եր-
կասիրութեան մասն կը կազմէին: Թէ զա-
նազան նորագիւտ գրուածներ արդարացուցին
այս ենթադրութիւնը, չկայ իմաստուն բանա-
սէր մը որ տարակուսի. բայց գէթ մենք
չենք գիտեր թէ ո՛րչափ ստուգուեցաւ այն
եւսերեան ցանկացեալ գրոց նկատմամբ:

Յերկարեցինք ցայսօրայր, ցուցընելու հա-
մար թէ նաև յարեւելս, ինչպէս յարեւմուտս,
բազմութիւ եղած պիտի ըլլան հարկաւոր առ-
բերք առ ի լուստուորէլ զնախկին որդագիր
հեղինակս: Ե՛րբեք թէ աւելի հին խմբա-
զիրք արեւելեան եկեղեցեաց քով մնացած
հարուստ հաւաքմանց մէջ են, զորս համա-
օճախ պիտի ծանօթացընենք: (Շարայարելի)